«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի

ՈՐՈՇՈՒՄ

8 փետրվարի 2022, N 8 - 5

2018-2019 ուսումնական տարում Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան ընդունված, 2019 թվականին բանակ զորակոչվելու կապակցությամբ ուսումնառությունը դադարեցրած և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2018 թվականի դեկտեմբերի 17-ի N 1676 - Ն հրամանով հաստատված նոր խմբագրությամբ շարադրված հավելվածի՝ «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման կարգի» 21-րդ կետով սահմանված ժամկետից ուշ ժամկետում ուսումնառությունը վերականգնելու համար ՀՊՏՀ դիմած նախկին ուսանողներ (արցախյան 44-օրյա պատերազմի մասնակիցներ) Հրաչյա Համլետի Եղիազարյանի և Սևադա Գագիկի Նավասարդյանի ուսանողական իրավունքները 2021-2022 ուսումնական տարվա 1-ին կիսամյակում վերականգնելու և 2-րդ կիսամյակ փոխադրվելու համար առաջացած առարկայական ստուգարքները և քննությունները հանձնելու թույլտվություն տալու մասին

Լսելով և քննարկելով՝

1. «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության ռեկտորի 2018 թվականի հոկտեմբերի 5-ի N ՈՒՄ/132/3-Ա հրամանով 2018-2019 ուսումնական տարում համալսարանի հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի «Հաշվապահական հաշվառում և հարկում (ըստ ոլորտի)» մասնագիտության բակալավրիատի առկա ուսուցման համակարգի 1-ին կուրս ընդունված (վճարովի հիմունքներով), բանակ զորակոչվելու կապակցությամբ ռեկտորի 2019 թվականի հունվարի 24-ի N ՈՒՄ/11/6-Ա հրամանով ուսումնառությունը դադարեցրած, 2021 թվականին զորացրված և ՀՀ կրթության և գիտության նախարարի 2018 թվականի դեկտեմբերի 17-ի N 1676-Ն հրամանով հաստատված նոր խմբագրությամբ շարադրված հավելվածի՝ «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման կարգի» 21-րդ կետով սահմանված ժամկետում (առ 2021 թվականի մարտի 24-ը) 2020-2021 ուսումնական տարվա 1-ին կիսամյակից ուսանողական իրավունքները վերականգնելու համար համալսարան չդիմած **Հրաչյա Համլետի Եղիազարյանի** ուսանողական իրավունքները 2021-2022 ուսումնական տարվա 1-ին կիսամյակում վերականգնելու մասին հարցը.

2. «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության ռեկտորի 2018 թվականի հոկտեմբերի 5-ի N ՈՒՄ/132/3-Ա հրամանով 2018-2019 ուսումնական տարում համալսարանի հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի «Հաշվապահական հաշվառում և հարկում (ըստ ոլորտի)» մասնագիտության բակալավրիատի առկա ուսուցման համակարգի 1-ին կուրս ընդունված (վճարովի հիմունքներով), բանակ զորակոչվելու կապակցությամբ ռեկտորի 2019 թվականի փետրվարի 11-ի N ՈՒՄ/22/15-Ա հրամանով ուսումնառությունը դադարեցրած, 2021 թվականին զորացրված և ՀՀ կրթության և գիտության նախարարի 2018 թվականի դեկտեմբերի 17-ի N 1676 - Ն հրամանով հաստատված նոր խմբագրությամբ շարադրված հավելվածի՝ «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման կարգի» 21-րդ կետով սահմանված ժամկետում (առ 2021 թվականի ապրիլի 11-ը) 2020-2021 ուսումնական տարվա 1-ին կիսամյակից ուսանողական իրավունքները վերականգնելու համար համալսարան չդիմած **Սևադա Գագիկի Նավասարդյանի** ուսանողական իրավունքները 2021-2022 ուսումնական տարվա 1-ին կիսամյակում վերականգնելու մասին հարցը:

Հիմք ընդունելով, որ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալի 2022 թվականի հունվարի 26-ի N 05/11.2/548-2022 գրությամբ առաջարկվել է սահմանված ժամկետից ուշ դիմած ուսանողների ուսանողական իրավունքների վերականգնման հարցը քննարկել համալսարանի գիտական խորհրդի նիստում, հաշվի առնելով պատերազմի հետևանքով ստեղծված իրավիճակը (առողջական, հոգեբանական խնդիրներ, զինվորական կոմիսարիատներից զինվորական գրքույկների տրամադրման ուշացումներ և այլն), ինչպես նաև այն հանգամանքը, որ **Հրաչյա Համլետի Եղիազարյանը** և **Սևադա Գագիկի Նավասարդյանը** արցախյան 44-օրյա պատերազմի մասնակիցներ են և ուսանողական իրավունքների վերականգնման համար սահմանված ժամկետում չեն դիմել համալսարան, քանի որ ունեցել են հոգեբանական խնդիրներ՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդը **որոշում է.**

1. **Հրաչյա Համլետի Եղիազարյանի** ուսանողական իրավունքները **վերականգնել** Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի **«Հաշվապահական հաշվառում և հարկում (ըստ ոլորտի)»** մասնագիտության բակալավրիատի առկա ուսուցման համակարգի **1-ին** կուրսում **2021-2022 ուսումնական տարվա 1-ին կիսամյակից**:
   Հաշվի առնել, որ Հրաչյա Համլետի Եղիազարյանը մինչև բանակ զորակոչվելը՝ 2018-2019 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի քննաշրջանում հանձնել է կրթական ծրագրով նախատեսված բոլոր դասընթացների ստուգարքներն ու քննությունները,

բացառությամբ «Ռուսաց լեզու (4 կրեդիտ)» և «Համակարգչային հմտություններ (3 կրեդիտ)» դասընթացների ստուգարքների և «Տնտեսագիտության ներածություն (4 կրեդիտ)» դասընթացի քննության:

2. **Սևադա Գագիկի Նավասարդյանի** ուսանողական իրավունքները **վերականգնել** Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի **«Հաշվապահական հաշվառում և հարկում (ըստ ոլորտի)»** մասնագիտության բակալավրիատի առկա ուսուցման համակարգի **1-ին** կուրսում **2021-2022 ուսումնական տարվա 1-ին կիսամյակից**:

   Հաշվի առնել, որ Սևադա Գագիկի Նավասարդյանը մինչև բանակ զորակոչվելը 2018-2019 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի քննաշրջանում կրթական ծրագրով նախատեսված բոլոր դասընթացներից հանձնել է «Արտակարգ իրավիճակներում առաջին բուժօգնություն (2 կրեդիտ)» դասընթացի ստուգարքը: 2-րդ կիսամյակ փոխադրվելու համար Սևադա Գագիկի Նավասարդյանը պետք է հանձնի ստուգարքներ՝ «Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակների հիմնախնդիրներ (2 կրեդիտ», «Հայոց պատմություն -1 (2 կրեդիտ)», «Ռուսաց լեզու (4 կրեդիտ)», «Համակարգչային հմտություններ (3 կրեդիտ)», «Մասնագիտական օտար լեզու-1 (4 կրեդիտ)», «Հայոց լեզու և հայ գրականություն-1 (2 կրեդիտ)», «Մշակութաբանություն (2 կրեդիտ)» դասընթացներից և քննություններ՝ «Բարձրագույն մաթեմատիկա-1 (3 կրեդիտ)», «Տնտեսագիտության ներածություն (4 կրեդիտ)», «Ֆինանսական շուկաներ և ֆինանսական ինստիտուտներ (4 կրեդիտ)» դասընթացներից:

3. Հանձնարարել հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկանին՝ երկօրյա ժամկետում կազմել և հաստատման ներկայացնել Սևադա Գագիկի Նավասարդյանի և Հրաչյա Համլետի Եղիազարյանի 2021-2022 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակ փոխադրվելու համար առաջացած առարկայական ստուգարքների և քննությունների հանձնման ժամանակացույցը:

4. Սույն որոշման նկատմամբ հսկողությունը վերապահել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ա.Վ.Գրիգորյանին:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Գալոյան**

2022 թ. փետրվարի 8
Երևան